Հացիկ

Հացիկ բնակավայրի վարչական տարածքը կազմում է 1213.42հա, բնակչությունը 1020 մարդ: Հացիկ բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 5կմ հեռավորության վրա: Գյուղը տեղադրված է Շիրակի մեղմաթեք դաշտում՝ ծովի մակարդակից 1650մ բարձրության վրա: Շրջակայքում կա հին եկեղեցի և գերեզմանոց, իսկ Հացիկ գյուղից 1 կմ հյուսիս-արևելք գտնվում է գյուղատեղի և սրբավայր: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, մշակույթի տուն, նորակառույց մանկապարտեզ: Գյուղատնտեսական հողատարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: